Դեղձավանի հիմնական դպրոցի

առաջին դասարանի դասղեկի

2022-2023թ.թ. ուսումնական տարվա հաշվետվություն

Դասվար՝ Արծվիկ Բեջանյան

Դեղձավանի հիմնական դպրոց

Տարեկան հաշվետվություն

Առակա	ժամաքանակ	
մայրենի	8	
մաթեմատիկա	4	
երաժշտություն	2	
ֆիզկուլտուրա	3	
տեխնոլոգիա	2	
կերպարվեստ	2	

Դասվար՝ Արծվիկ Բեջանյան

Դասարան- առաջին
Աշակերտների թիվը 5
Տղա՝ 1, աղջիկ՝ 4

Մինչև սեպտեմբերի 10-ը կազմել՛ եմ ,Մայրենիե, ,Մաթեմատիկաե, ,Երաժշտությունե, ,Տեխնոլոգիաե առարկաների թեմատիկ պլանավորումները՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները: Կազմել եմ նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը:

Սեպտեմբերի 1 –ին աշակերտներն իրենց մասնակցությունն են ունեցել Գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը:

Յուրաքանչյուր շաբաթվա վերջում ըստ ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի անց եմ կացրել դասղեկական ժամեր, աշակերտների հետ քննարկել համապատասխան թեմաները:

Ուսումնական տարվա ընթացքում հրավիրել եմ 7 դասարանական ժողով հետևյալ օրակարգերով.

01.09. 2022թ.

Գիտելիքի օր՝- դասաարանում

Անկախության օր՝ -քննարկում

29. 09. 2022թ.

Աշակերտների կարգապահության և սանիտարահիգիենիկ վիճակի մասին

Դասարանի ակտիվի ընտրություն:

20. 10. 2022թ.

Դասարագրքերի և գրենական պիտույքների վիճակի ստուգում:

Հրահանգներ աշնանային արձակուրդին:

22. 12. 2022թ.

Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում:

Հանձնարարականներ ձմեռային արձակուրդին:

01.02. 2023թ.

Դասարանի ակտիվի կատարած աշխատանքի մասին:

16. 03. 2023թ.

Տետրերի և օրագրերի վիճակի ստուգում:

Հրահանգներ գարնանային արձակուրդին:

25. 05. 2023թ.

Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում:

Հրահանգներ ամառային արձակուրդին:

Ուսումնական տարվա ընթացքում հրավիրել եմ 6 ծնողական ժողով հետևյալ օրակարգով.

08. 09. 2022թ.

Եկեք ծանոթանանք՝ ծնող- դասվար

Ծնողկոմիտեի կազմի ընտրություն:

15. 10. 2022թ.

Ծնողների ներգրավումը դաստիարակչական աշխատանքներում

Կարգապահություն

20. 12. 2022թ.

Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

16. 01. 2023թ.

Ընթացիկ հարցեր:

Կարգապահություն,առաջադիմություն

Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի քննարկում:

20. 02. 2023թ.

Ուսման ընթացքում հետ մնացող աշակերտների հետ տարվող աշխատանքների քննարկում

Վատ սովորույթներ. Ինչպես պայքարել դրանց դեմ:

Ընդլայնենք երեխաների հետաքրքրության շրջանակը:

17. 03. 2023թ.

Աշակերտների առաջադիմության քննարկում:

19.05.2023

Երկրորդ կիսամյակի ամփոփում

Դասագրքերի վերադարձ

Գրել եմ բոլոր դասերի պլանները և դրանք պահպանել եմ:

Բոլոր դասերի պլանները կազմելիս հաշվի եմ առել չափորոշչային պահանջները:

Կազմել եմ և մշակել բաց դասի պլաններ, առարկայական միջոցառման սցենար.

Մայրենի – Ա տառի շնորհանդես /հոկտեմբերի 20/

Այբուբենի տոն /մայիսի15/:

Աշակերտներն իրենց մասնակցությունն են ունեցել Ամանորյա ,Հովհաննես Թումանյանի 154 ամյակի միջոցառումներին:

Ակտիվ մասնակցություն են ունեցել համադպրոցական շաբաթօրյակին

Ինձ մոտ դասալսումներ են կատարել տնօրենը, ծնողկոմիտեի անդամ Հ. Ղազարյանը: դասալսումներից հետո մասնակցել եմ դասի քննարկմանը և կատարել եմ անհրաժեշտ հետևություններ:

Գրադարանավարի հետ պարբերաբար ստուգել ենք դասագրքերի վիճակը, անհրաժեշտության դեպքում նորոգել ենք դասագրքերը:

Դասավանդման ժամանակ կիրառել եմ հետևյալ մեթոդները.

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվել են ուսուցման ավանդական մեթոդները՝ պատմելը, բացատրելը: Աշակերտների մտածողության զարգացման, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորման համար կիրառվել են նոր մեթոդներ՝ խճանկար, Վենի դիագրամ, մտագրոհ, դերային խաղ, , T-աձև աղյուսակ, ԳՈՒՍ...

Դասերին օգտագործել եմ դիտակտիկ պարագաներ, ինքնաշեն առարկաներ, պաստառներ, նկարներ, քարտեր:

Պատրաստել եմ պաստառներ՝

Աշակերտներին ծանոթացրել եմ դպրոցի տարհանման պլանին:Տեխնոլոգիայի դասին կազմակերպել եմ էքսկուրսիա դպրոցի հողամասը: